ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի ապրիլի 9-11-ը

Հունգարիա (Բուդապեշտ) գործուղման արդյունքների մասին

1. **Անուն, ազգանունը՝**

   Արամ Վարդանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Հունգարիա (ք. Բուդապեշտ), 2018 թվականի ապրիլի 9-11-ը

4. **Հրավիրող կողմը՝**

   Միջազգային Գինու Տուրիզմի Կոնֆերանս (IWINETC)

5. **Գործուղման նպատակը՝**

   Մասնակցություն 10-րդ ամենամյա գինու զբոսաշրջությանը նվիրված կոնֆերանսին

6. **Քննարկված թեմաները**

   - Գինու զբոսաշրջության ոլորտի առկա իրավիճակը, զարգացման միտումները, նոր ուղղություններն ու հեռանկարները
   - Երկրի, որպես գինու զբոսաշրջային վայրի բրենդավորման և առաջմղման արդիական ուղղություններ և մեթոդներ
   - Գինեգործության և գինու զբոսաշրջության ՓՄՁ հատվածի զարգացման միտումներ, միջազգային լավագույն փորձի ներկայացում, ոլորտի հանրահայտ վայրերի փորձի ներկայացում
   - Ոլորտի նոր զարգացող ուղղությունների բացահայտում
   - Գինու զբոսաշրջության զարգացման ազդեցությունը մարզային զարգացման վրա

Scanned by TapScanner

- Գինեգործությունը, որպես գինու զբոսաշրջության ոլորտի կայուն զարգացման հիմնախնդիր
- Տարբեր երկրներում գինու զբոսաշրջային արդյունքների, երթուղիների մշակում, զբոսաշրջիկների համար հետաքրքիր փաթեթների մշակում
- Թվային մարքեթինգ, շուկայավարական ռազմավարություններ, էլեկտրոնային հարթակների արդյունավետ օգտագործում գինու զբոսաշրջության խթանման համար:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

2018թ. ապրիլի 10-11-ը Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում տեղի ունեցած 10-րդ ամենամյա գինու զբոսաշրջությանը նվիրված կոնֆերանսը կարևորագույն իրադարձություններից է գինու և խոհարարական զբոսաշրջության ոլորտում: Յուրաքանչյուր տարի այն կազմակերպվում է գինու զբոսաշրջությամբ հայտնի երկրներում: Վերջին տարիներին այն կազմակերպվել է այնպիսի երկրներում ինչպիսիք են՝ Իտալիա, Ֆրանսիա, Պորտուգալիա, Խորվաթիա և Վրաստան:

Միջոցառման նպատակն է զարգացնել պրոֆեսիոնալ կրթությունը, հնարավորություն ընձեռել պատկերացում կազմել գինու՝ որպես զբոսաշրջային արդյունքի առանձնահատկությունների և նպատակների վերաբերյալ, հանդիպել գինու փորձառու մատակարարների հետ և բացահայտել ընդունող երկրների գինու երթուղիները: Այն կարևոր հարթակ է տարբեր երկրների զբոսաշրջության ոլորտի պետական լիազոր մարմինների ներկայացուցիչների և գործարարների համար միմյանց արդյունքը գնահատելու և հետագա համագործակցության հնարավորությունները քննարկելու նպատակով:

Համաժողովի ձևաչափը նախատեսում էր ցուցահանդես, պաշտոնական ելույթներ, շնորհանդեսների ներկայացում, քննարկումներ, հարց ու պատասխանների հատված, B2B հանդիպումներ մասնավոր հատվածի ներկայացուցիչների միջև:

Միջոցառմանը հայկական կողմը ներկայացված է եղել պետական և մասնավոր հատվածների մասնակցությամբ: Միջոցառմանը մասնակցել են ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի,

Scanned by TapScanner

«Խաղողագործության և գինեգործության» հիմնադրամի, «Արենի Փառատոն» հիմնադրամի, զբոսաշրջության ոլորտի մասնավոր հատվածի ներկայացուցիչներ:

Քննարկումների ընթացքում հայկական կողմը ներկայացրել է ինչպես զբոսաշրջության, այնպես էլ մասնավորապես գինու զբոսաշրջության ոլորտի ձեռքբերումները վերջին տարիների ընթացքում, առկա հնարավորությունները, զարգացման տեսլականը:

Հայկական կողմը կոնֆերանսի շրջանակներում ունեցել է նաև պաշտոնական տաղավար, որտեղ ներկայացված են եղել գովազդատեղեկատվական նյութեր Հայաստանի զբոսաշրջության ոլորտի, ինչպես նաև գինու և գինեգործության ոլորտների վերաբերյալ: Ներկայացված են եղել գինու արտադրատեսակներ և միջոցառման երկու օրերի ընթացքում կազմակերպվել է գինու համտես:

Միջոցառման կազմակերպիչների հետ անց են կացվել մի շարք քննարկումներ հաջորդ տարիներին միջոցառումը Հայաստանում կազմակերպելու վերաբերյալ: Քննարկումների արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն դիտարկել 2020թ. Հայաստանում միջոցառման կազմակերպման հնարավորությունը և այդ առիթով կազմակերպիչները հայտնել են պատրաստակամություն մայիս-հունիս ամիսներին այցելել Հայաստան՝ տեղում ծանոթանալու առկա հնարավորություններին և շարունակելու քննարկումները:

8. Գործուղվողները, ստորագրությունը, ամսաթիվը

Արամ Վարդանյան

04.05.2018թ.

Scanned by TapScanner